

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇՈՒՇԱՆ ՌՈՔԵՐՏԻ ԱՍԿԱՐՅԱՆԻ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ

(1990-2010 թթ.)

**ժ. 01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
ԱՆԱՅԻՏ ՌՈՒԲԵՆԻ ՄԵՆԵՄՇՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ԼԵՆԴՐՈՒՇ ԱՐԱՍԻ ԱԼՈՅԱՆ

բանասիրական գիտությունների
թեկնածու
ՅՐԱՆՏ ՄԱՅՍՈՒԴԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հոկտեմբերի 15-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՂ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. սեպտեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱՎԳԻՐԸ

Աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների ներկա ընթացքն առավել քան երբևէ ընդգծում է ազգային ինքնագիտակցության ամրապնդման դերը, ինչն անմիջականորեն առնչվում է մշակութային իրողություններին ու ազդեցություններին: Անտարակույս, ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում արմատական դերակատարություն ունի երկրի մշակութային կյանքը, որում իր մասնաբաժինն ունի նաև մամուլը: Ասվածի քննության համար ռազմավարական նշանակության տարածք է ռազմաքաղաքական ու տնտեսական դժվարագույն պայմաններում գտնվող արցախյան լրատվադաշտը՝ հոգևոր ու կրթամշակութային իրացումներով: Մշակութային ժառանգության խոր և ճշմարիտ ընկալման, նորովի մատուցման ու քարոզչության գործում տպագիր մամուլին մեծ առանձնաշնորհումներ են վերապահված: Համակարգված մշակութային քաղաքականության իրականացումը, ինչն ազգային ինքնության պահպանման խնդիր է լուծում, կարևոր է ոչ միայն հասարակական կարծիքի և հանրային ու ազգային մտածողության ձևավորման, այլև մշակութային դիվանագիտությամբ աշխարհին ներկայանալու առումով:

Ատենախոսությունը նվիրված է ինչպես գոյապայքարի տարիներին, այնպես էլ պետականաշինության գործընթացում արցախյան տպագիր մամուլի՝ մշակութային կյանքի լուսաբանման հարցերին: Արցախյան մամուլի օրգանների մշակութային հրապարակումների քննությամբ ուրվագծվում են Արցախի մշակութային կյանքը, նրա զարգացման միտումներն ու հեռանկարները: Փորձ է արվել մշակութային խնդիրները դիտարկել ժամանակի քաղաքական իրականության համար այնքան կարևոր ազգային ինքնության պահպանման հարցերի համապատկերում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը արցախյան մամուլն է, առարկան՝ արցախյան մշակույթի տարբեր ոլորտներին (երգարվեստ, պարարվեստ, գեղանկարչություն, քանդակագործություն, թատրոն, կինոարվեստ, պատմական հուշարձանների պահպանություն, հայ արդի գրականություն, ճարտարապետություն, կրոն, գորգարվեստ և այլն) վերաբերող լրագրողական հրապարակումները: Ընդ որում, ուսումնասիրվել են ինչպես գոյապայքարի տարիներին, այնպես էլ զինադադարից հետո, պետականաշինության և ժողովրդավարացման գործընթացում լույս ընծայված թերթերն ու հանդեսները:

Աշխատանքի նպատակն է համակողմանիորեն ներկայացնել արցախյան մշակութային կյանքը գոյապայքարի տարիներին և զինադադարից հետո երկրամասի պարբերական մամուլի էջերում՝ բացահայտելով այդ մշակույթի յուրահատկությունները, նյութի մատուցման բովանդակային, թեմատիկ և ժանրային բազմազանությունը:

Աշխատանքի նպատակից բխել են հետևյալ խնդիրները՝

1. Արցախյան մամուլում խորհրդային շրջանի և գոյապայքարի տարիների մշակութային հրապարակումները դիտարկել տեղեկատվական շրջափակման պայմաններում ազգապահպան գաղափարների տարածման նշանակության տեսանկյունից,
2. Արցախյան գոյապայքարի ու հարաբերական անկախության պայմաններում օբյեկտիվորեն քննել Արցախի տպագիր մամուլի մշակութային քաղաքականությունը,
3. Բացահայտել մշակութային կյանքի այն ոլորտները, որոնք կենսունակ են դարձել զինադադարից հետո՝ նպաստելով ազգային ինքնության պահպանմանը,
4. Ներկայացնել արցախյան տպագիր մամուլի՝ մշակութային կյանքն արտացոլող հրապարակումների ժանրային նկարագիրը տվյալ ժամանակահատվածի կտրվածքով:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Այսօր ամբողջ աշխարհում մշակույթը ներհյուսված է պատմաքաղաքական, կրթական ու հասարակական իրադարձություններին և մշակութային բաղադրիչով է պայմանավորվում հասարակության ու ազգի իմաստային դաշտն ու արժեքային համակարգը:

Կարևորելով մշակույթի պահպանման խնդիրը հատկապես վիճելի կարգավիճակ ունեցող տարածքի՝ Արցախի ինքնության պահպանման ֆոնին՝ մենք հարցը դիտարկել ենք արցախյան պարբերական մամուլի պատմության համատեքստում՝ այն գիտակցությամբ, որ վերջինիս ուսումնասիրության արդիական հնչեղությունն առաջնային է և կասկած չի հարուցում:

Թեմայի արդիականությունը պայմանավորվում է նաև արցախյան տպագիր օրգանների մշակութային կյանքը լուսաբանող գիտական հրապարակումների բացակայությամբ: Մինչդեռ ազգային մշակույթի, ավանդույթների, մտածողության ու ինքնության պահպանման գործում իր ծանրակշիռ դերն ունի նաև տպագիր մամուլը: Թեման խիստ կարևոր է այն պատճառով, որ մշակութային կյանքի լուսաբանման խնդիրների ուսումնասիրությունը վեր է հանում նաև Արցախի հայկականությանն առնչվող ապացույցներ ու վկայություններ՝ ի պատասխան ադրբեջանական մամուլում արցախի հայկականությունը կասկածի տակ դնող ապատեղեկատվության: Մշակութային հրապարակումների ուսումնասիրությունը օգնում է ընդգծելու և արժևորելու գոյապայքարի տարիներին մշակույթի ազգապահպան գործառույթի դերն ու նշանակությունը, իսկ հետպատերազմական արցախյան մամուլի մշակութային քննությունը ուրվագծում է մերօրյա Արցախի մշակութային ոգին, դրա կայացմանն ուղղված ջանքերը, հայկական մշակութային ինքնության վերածննան ընթացքն ու տեսլականը:

Աշխատանքը հետաքրքրական կլինի ոչ միայն մշակութային կյանքը լուսաբանող, այլև այն լրագրողների համար, ովքեր գործում են պատերազմական իրավիճակներում, հակամարտող կողմ հանդիսացող հասարակություններում, ընդգրկված են բանակցային գործընթացի մեջ և ժողովրդական դիվանագիտությունն ու մշակույթը դիտում են որպես լարվածության թուլացման կամ կոնֆլիկտի լուծման այլընտրանքային տարբերակ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսությունը գրված է լրագրության ուսումնասիրության արդի մեթոդներով և սկզբունքներով: Ըստ անհրաժեշտության կիրառված են նյութի հետազոտման համեմատական, պատմաքննական, համադրման, բովանդակային, նշանագիտական քննության մեթոդները: Կոնտենտ (բովանդակային) վերլուծության հետազոտության մեթոդով փորձել ենք բացահայտել տպագիր մամուլում արտացոլված մշակութային կյանքի պատկերը ուսումնասիրության համար առավել հետաքրքրական ժամանակահատվածներում (տե՛ս նկար 1-ը և 2-ը):


Ինտերնացիոնալ քարոզչության նյութեր	104
Ազգային քարոզչության նյութեր	47
Ադրբեջանական քարոզչության նյութեր	39

**«Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1970 թվականի
306 համարների մշակութային թեմատիկայի
նյութերը**



Նկար 1

**Մշակութային հրապարակումները 1980 թվականի
«Խորհրդային Ղարաբաղ» թերթի ուսումնասիրման
արդյունքներով
Ազգային քարոզչության
300 համար
նյութեր**



Նկար 2

Մեթոդները հուսալի են և թույլ են տալիս կատարել առկա աղբյուրների որակական-քանակական վերլուծություն: Վերլուծության ընթացքում, հիմք ընդունելով փաստագրական աղբյուրները, առանձնացրել ենք իմաստային միավորները՝ դրանց հիման վրա կատարելով համապատասխան եզրահանգումներ:

Հաշվի է առնվել մամուլի պատմության մասնագետների ուսանելի փորձը:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Արցախի լրատվական ոլորտի մշակութային պատկերը գիտական հետազոտության չի ենթարկվել: Հրապարակի վրա սույն նախախորհրդային շրջանի նյութեր են¹: Պատահական չէ, որ թեմայի ընտրության և ուսումնասիրության հարցում որոշակի դեր է խաղացել նրա՝ հիմնականում չմշակված լինելու իրողությունը: Ինչպես խորհրդային մամուլի, այնպես էլ գոյապայքարի ու հետպատերազմյան շրջանի տպագիր մամուլի մշակութային կյանքի մասին չկա ամբողջական ու համակողմանի վերլուծության ենթարկված և ոչ մի

¹ Տե՛ս Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն. 1828-1920 թթ., Եր., Երևանի համալսարանի հրատ., 1989, եւ Սովետական Ղարաբաղի մամուլը, Բաքու, Ադր. պետ. հրատ., 1962., գրքերը:

աշխատանք, բացառությամբ Հրանտ Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսության մեջ կատարված առանձին անդրադարձները²:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ փորձ է արվել գիտական լույսի ներքո և համակողմանիորեն ներկայացնել մշակութային կյանքը արցախյան մամուլում, վեր հանել մշակութային առնչվող հրապարակումների բովանդակային, ժանրային և թեմատիկ առանձնահատկությունները, քննել երկրամասի մշակութային ինքնությանն առնչվող մի շարք հարցեր: Արցախյան մամուլի խորհրդային շրջանի և գոյապայքարի տարիների մշակութային հրապարակումները դիտարկվել են տեղեկատվական շրջափակման պայմաններում ազգապահպան գաղափարների նշանակության տեսանկյունից: Արցախի տպագիր մամուլի մշակութային քաղաքականությունը քննության է առնվել արցախյան գոյապայքարի ու հարաբերական անկախության պայմանների հաշվարկումով, որի արդյունում ուրվագծվել են մշակութային կյանքի այն ուղորտները, որոնք կենսունակ են դարձել հատկապես զինադադարից հետո՝ նպաստելով ազգային ինքնության պահպանմանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի պատմության և տեսության ամբիոնում: Աշխատանքի որոշ հատվածներ առանձին հոդվածներով տպագրվել են գիտական հանդեսներում և ժողովածուներում:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից ու օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվել են թեմայի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը, արդիականությունը, պարզաբանվել հետազոտության նպատակը, խնդիրները: Ներկայացվել են աշխատանքի մեթոդական հիմքն ու սկզբունքները, որոնք հնարավորություն են տվել նյութը ներկայացնել համակարգված մոտեցմամբ:

Գլուխ 1.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՆԵՑԱՅՆԵՐԻ ԼՈՒՍԱՔՆՆՈՒՄԸ ԱՐՑԱՒՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1988-1994)

Առաջին գլխում անդրադարձել ենք գոյապայքարի տարիներին (1988-1994) արցախյան մամուլի՝ մշակութային առնչվող հրապարակումներին: Այս գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին գլխի «Արցախի մշակութային կյանքը խորհրդային իշխանության տարիներին (1970-1980-ական թվականներ)» խորագիրը կրող առաջին ենթագլխում համառոտ անդրադարձ է կատարվել տպագիր մամուլում, մասնավորապես «խորհրդային Ղարաբաղ» թերթում՝ խորհրդային Ադրբեջանի կազմում գտնվելու ժամանակահատվածում մարզի կարգավիճակ ունեցող Ղարաբաղի մշակութային կյանքին, ադրբեջանական իշխանությունների կողմից տարվող մշակութային քաղաքականությանը:

1980 թվականին լույս տեսած «խորհրդային Ղարաբաղ» թերթի թվով 300 համարների ուսումնասիրության արդյունքում ուրվագծվեց ադրբեջանական պարտադրվող մշակութային գաղափարախոսության այն պատկերը, որը հետագայում պետք է մշտական լարվածության հիմք դառնար: Մշակութային կյանքին առնչվող բոլոր հրապարակումներում օգտագործվում են «եղբայրական գրականություն», «եղբայրական գրականության

² Տե՛ս Ալեքսանյան Հր., Զճանաչված երկրի լրատվությունը: ԼՂՀ տեղեկատվական դաշտի համապատկերը և խնդիրները, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հր., 2011թ.:

տասնօրյակ», «բազմազգ կուլտուրայի միասնություն»³, «բազմազգ եղբայրական արվեստ», «ԽՍՀՄ ժողովուրդների պոեզիա», «ԽՍՀՄ ժողովուրդների պոեզիայի քարտեզի առաջ» և նմանօրինակ այլ ինտերնացիոնալ երանգավորվածության բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ: Ավելին, մեր վերլուծության արդյունքում պարզել ենք, որ ինտերնացիոնալ մշակութային գաղափարական ազդեցությունների քողի տակ անեքսիայի էր ենթարկված ազգային մշակույթը: Հայաստանի, ԼՂԻՄ-ի և Ադրբեջանի մշակութային կյանքին առնչվող նյութերի տպագրման ժամանակ հիմնականում պահվում էր հավասարության սկզբունքը: Եթե Վահան Տերյանի ծննդյան տարեդարձի կապակցությամբ տպագրվել էր նյութ, ապա թերթը չէր կարող շրջանցել ադրբեջանցի գրող Սուլեյման Ռահիմովի ծննդյան 70-ամյակը:⁴ Նույնը՝ արվեստագետների պարագայում. քանդակագործ Հակոբ Գյուրջյան արվեստագետին ներկայացվող հոդվածը չէր կարող առանձին դրվել տվյալ թեմայի շրջանակներում⁵: Ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում նաև արվեստագետներ Թոֆիկ Աղաբաբաևան և Ռահիմ Մամեդովը, որոնց աշխատանքները ևս իրենց մեջ ամփոփում են խորհրդային մարդու կերպարը:

«Խորհրդային Ղարաբաղ» թերթը և առհասարակ ժամանակի տպագիր մամուլի գործունեությունը պարտադրվող մշակութային համակարգի մի մասն էր, որն, ըստ էության, վերածվել էր ազգային ճնշում իրականացնող գործիքի և ներծծված էր բացահայտ և քողարկված խտրականությամբ: Սա յուրօրինակ ագրեսիա էր տարածքում ապրող մարդկանց մշակութային պատկերացումների հանդեպ, որն իրականում խորացրեց միջէթնիկ լարվածությունը, հանգեցրեց նրան, որ հայերը փորձեցին տեր կանգնել իրենց մշակութային նվաճումներին:

Արդեն 1988-ի սկզբներին ազգային զարթոնքը սկսեց ընդգրկել մշակութային կյանքի տարբեր հատվածներ, առանձին անհատներ հանդես եկան նախաձեռնություններով: Փորձեր էին արվում խոսելու մշակութային արժեքների մասին, հասարակության մեջ վերականգնելու ազգային ինքնագիտակցությունը, սեփական մշակութային արժեքներին տեր կանգնելու ձգտումը: Ազգային զարթոնքի ակունքներում կանգնած էին առաջին հերթին մշակույթի գործիչներն ու մտավորականությունը, որոնք իրենց առաքելությանը հավատարիմ մնացին նաև գոյապայքարի տարիներին:

Առաջին գլխի երկրորդ հատվածում (**«Մշակութային կյանքը արցախյան մամուլում պատերազմի տարիներին»**) ներկայացվել է գոյապայքարի վեց տարիների ընթացքում տպագիր մամուլում արտացոլված մշակութային կյանքը: Չնայած ստեղծված սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր վիճակին, մշակույթը նաև մամուլի միջոցով կատարեց իր ազգապահպան գործառույթը: Ազատամարտի տարիներին արցախյան պարբերականների ուշադրության կենտրոնում էին հատկապես թատերարվեստը, երգարվեստը, կերպարվեստը և պատմամշակութային հուշարձանները, իսկ մշակույթի այլ ոլորտների մասին նյութերի բացակայությունը հիմնականում կարելի է բացատրել այդ ոլորտներում արձանագրված բացիթողի վիճակով:

1988 թվականը Արցախի պատմության մեջ մտավ ոչ միայն որպես ազգային-ազատագրական պայքարի մեկնարկի տարեթիվ, այլ նաև սկիզբ առավ արցախյան մամուլի նորագույն շրջանը: 1988-1990 թթ. «Սովետական Ղարաբաղ» մարզային թերթի յուրաքանչյուր համարի ընդհանուր տպաքանակն անցնում էր 90 հազարից: Արցախից ու Հայաստանից դուրս հատկապես մեծ պահանջարկ ուներ այդ թերթի ռուսերեն կրկնօրինակը («Советский Карабах»), որը մայր տարբերակի հետ հավասարապես լույս էր տեսնում շաբաթական 6 անգամ: Այս ժամանակահատվածում իրենց ուրույն դերն ունեցան ինքնահրատ պարբերականները, ինչպես, օրինակ, «Վերածնունդը (1989 թ.)», «Ավետյաց երկիրը» (1990 թ.)»:⁶ Գոյապայքարին զուգահեռ սկսեցին տպագրվել «Միացումը (1989 թ.)», «Ամարասը (1989 թ.)», «Պայքարը (1989 -1990 թ.)»: Այս պարբերականների շարքում համեմատաբար երկար կյանք ունեցավ ԼՂՀ ՀՀԴ հովանու ներքո տպագրվող «Պայքար» թերթը, որն առավելապես կուսակցական գաղափարակրի առաքելություն էր ստանձնել: Բոլոր այս թերթերի առանցքային թեման ստեղծված քաղաքական նոր իրավիճակն էր ու պայքարի մատնանշվող ուղին:

³«Խորհրդային Ղարաբաղ», 1970 թ. մարտի 4, N52 (9702), էջ 3:

⁴«Խորհրդային Ղարաբաղ», 1970 թ. մարտի 7, N55 (9705), էջ 4:

⁵«Խորհրդային Ղարաբաղ», 1970 թ. հունվարի 6, N3 (9653), էջ 4:

⁶Հարությունյան Մ., Արցախի պարբերական մամուլի պատմությունից (1874-2009 թթ.), «Դիզակ պլուս», 2010, էջ 39:

Ուսումնասիրության համար կարևոր նյութ են պարունակել հատկապես գոյապայքարի տարիների տպագիր մամուլի մշակութային հրապարակումները: Դժվարին, ծանր օրերի և հոգևոր ու մշակութային համոզմունքների ու գաղափարների միջև մենք փոխադարձ ազդեցության օրինաչափ կապ ենք նկատում: Մշակութային կյանքը գոյապայքարի տարիներին ժողովրդի հետ հավասար անցնում էր պայքարի իր ուրույն ուղին, փորձեր էին կատարվում ուղղել անցյալում թույլ տրված սխալները, որոնք մեր պարագայում վերաբերում էին սեփական մշակութային արժեքները հավուր պատշաճի չներկայացնելուն և չլուսաբանելուն:

1993-ին արդեն ծնունդ է առնում «Արցախի» «Մենք ենք, մեր սարերը» գրական-մշակութային հավելվածն ու «Նարեկ» մանկապատանեկան էջը՝ «Կանք, պիտի լինենք, ու դեռ շատանանք» կարգախոսով: Գրական-մշակութային հավելվածում տեղ են գտնում ոչ միայն Սփյուռքից ու Հայաստանից ժամանած մշակույթի գործիչների հետ հարցազրույցներ, այլև «Արցախ» հրատարակությամբ «Գրադարակ» խորագրի ներքո տպագրված գրքերի գրախոսականներ, արցախյան ժողովրդական բանահյուսության արժեքներ, խաղիկներ և այլն: «Հայկազունք», «Մի դրվագ հայոց երևելիների կյանքից», «Մունք» խորագրերը⁷ դառնում են ազգային ինքնության, ազգային արժեքների փոխանցման յուրատեսակ հարացույց: Իսկ «Արցախյան գորգերի վերածնունդ»⁸ խորագրով նյութերը կարելի է դիտել նաև որպես ազգային-մշակութային կենցաղավարության վերակենդանացման քայլ:

Արցախյան մամուլում տեղ գտած հրապարակումներում թեմատիկ առանցք է դառնում արցախյան շարժումը, ավելի կոնկրետ՝ ազգային զարթոնքը: Այն ոգի ու մարմին է ստանում ինչպես չափածո, այնպես էլ արձակ ստեղծագործություններում, երաժշտության մեջ, քանդակի գործերում ու կտավներում: «1988-ից սկսած ժողովրդի մաքառման ոգին մտավ երգի մեջ՝ ընդվզումի համարձակությամբ և փիլիսոփայական խորքով: Երգը ոչ միայն դարձավ օրերի թեժ արծազանքը, այլև հոլովվեց որպես անցած և ներկա ճանապարհների իմաստավորում, որպես պատմական կենսափոփոխ ծնված խոս ու խորհուրդ: Այդ խորհուրդը կոնկրետ ակունք ու հասցե ունի: Ակունքը՝ մեր անցյալը, հասցեն՝ ազգային ինքնորոշման իրավունքը»,- գրում է «Արցախ» հանդեսը⁹:

Մամուլում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում թատրոնին վերաբերող հոդվածները: Պատճառը, թերևս, տարածաշրջանում աշխույժ թատերական կյանքի երկարատև պատմությունն է, որը գոյապայքարի տարիներին համեմատաբար զրկված էր մշտական հանդիսատեսի ուշադրությունից և լեփ-լեցուն դահլիճներից: Ողջ պատերազմի ընթացքում մայրաքաղաքի թատերական կոլեկտիվը ներկայացումներ էր ցուցադրում Ստեփանակերտի նկուղներում. «Թատրոնում կազմակերպվեցին ստեղծագործական բրիգադներ, որոնք շրջում էին ընդերկրյա կյանքով ապրող ստեփանակերտցիների նկուղները և հայրենասիրական բանաստեղծությունների իրենց արտասանություններով, հանրահայտ ներկայացումներից հատվածներ խաղալով՝ հուսադրում նրանց՝ հավատ ներշնչելով հաղթանակի հանդեպ»¹⁰: Հրետակոծության պայմաններում թատրոնը բեմադրում էր նաև պատմահայրենասիրական պիեսներ: «Արցախյան ազգային ազատագրական պայքարը մեծ փորձություն եղավ արցախցու համար: Արվեստի մարդիկ և հատկապես Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի դերասանները արիությամբ անցան այդ փորձությունը: Պատերազմյան տարիներին թատրոնի մեր նվիրյալները, արվեստով ոգեկոչելով ազատամարտիկներին և թիկունքում սպասող նրանց հարազատներին, մնացին իրենց կոչման բարձրության վրա և ապացուցեցին, որ թատրոնը նույնպես ժողովուրդ է պահում»¹¹:

Արցախյան մամուլում փորձեր էր կատարվում նաև կանխատեսելու մշակույթի վաղվա օրը և տալու հեռանկարների յուրատիպ ուրվագծեր: Հաճախ դրանք հիմնավորվում էին քաղաքական համակարգերի վերափոխումներով: Դրական համարելով վերակառուցման ազդեցությունը մշակույթի ոլորտի վրա՝ «Խորհրդային Ղարաբաղ» թերթը վերակառուցման առաջին և ամենամշանակալից նվաճումը համարում է արվեստագետի ազատագրությունը:

⁷«Արցախ», N58,(16338) 1993 թ., մայիսի 28, էջ 3:

⁸«Արցախ», N58,(16338) 1993 թ., մայիսի 28, էջ 3:

⁹«Արցախ», №4 (13), 1991, էջ 70:

¹⁰«Կրթությունը, մշակույթը և սպորտը Արցախում» (տպագրված է ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի աշխատողների առաջին համագումարի առթիվ), Երևան, «Անտարես» 2006, էջ 185:

¹¹Նույն տեղում, էջ 182:

«Խորհրդային գրողը, գեղանկարիչը, ռեժիսորը դեռ երբեք չեն ունեցել այնպիսի ստեղծագործական անկախություն, ինչպես այսօր: Գեղարվեստական մտավորականության կազմակերպությունները՝ ստեղծագործական միությունները, ընկերությունները, ստուդիաները, թատրոնները նման հնարավորություններ չեն ունեցել անկախ քաղաքականություն վարելու, ինչպես վերակառուցման ժամանակաշրջանում»:¹² Հողվածագիրը մատնանշում է, որ «սկսված վերափոխումների անկասկած մվաճումը դարձավ այսպես կոչված սպիտակ բծերի վերացումը՝ գրողների, նկարիչների, կոմպոզիտորների այն ստեղծագործությունների երևան գալը, որոնք առաջ չէին հրապարակվում և չէին կատարվում»¹³: Սա հոգևոր և մշակութային այն յուրատեսակ ազատագրության գործընթացն էր, որին զուգահեռ էր ընթանում նաև ազգայնականացման գործընթացը:

Շարժման սկզբնական շրջանում հանրապետության պաշտոնաթերթում հաճախադեպ են արցախյան պատմամշակութային արժեքների անդրադարձող նյութերը, որտեղ հողվածների հեղինակները պատկան մարմինների ուշադրության են արժանացնում երկրամասի պատմամշակութային կոթողների անմխիթար վիճակը, անհայտ անձանց կողմից ազգային նյութական արժեքների յուրացման և «պեղումների» քողի տակ իրականացվող բռնազավթումները: Հարկ է նշել, որ վերոնշյալ արշավը սկսվել էր դեռևս 20-րդ դարի 60-ական թվականների վերջերին և 70-ականների սկզբներին, երբ Ադրբեջանի կողմից մշակված քաղաքականությամբ լայն արշավ էր ծավալվել ինչպես հայկական քրիստոնեական տաճարներն ավերելու (դրանց ուսումնասիրության երկրաբանա որոնողական աշխատանքների պատրվակով), այնպես էլ հայկական ձեռակերտ ազգային գորգերը գնելու ուղղությամբ: Կուլտուրայի մարզային բաժնի ներկայացուցիչները, շրջելով գյուղերն ու քաղաքները, հայ ընտանիքներին առաջարկում էին իրենց վաճառել «հին, անպետք» գորգերն ու կարպետները: «Եվ գյուղացիները, հազվադեպ՝ նաև քաղաքացիները, վաճառում էին, քանզի Ադրբեջանը ժլատ չէր փողի հարցում»¹⁴: Պատմական և մշակութային մեծ արժեք ներկայացնող այդ գորգերից ու կարպետներից շատերը իրական գլուխ-գործոցներ էին՝ տեղեկատու հարուստ զարդանախշերով, որոնք արտացոլում էին հայկական իրականության այս կամ այն կարևոր դարաշրջանը, այդ գորգերում ստեղծագործաբար հյուսված էր հայոց պատմությունը: Իսկ արդբեջանական իշխանությունների նպատակամետ քաղաքականությունը հենց հայերի հոգևոր և նյութական արժեքների յուրացման մեջ էր, և իզուր չէ, որ տեղական պարբերական մամուլում նրանց գործունեությունը որակվում էր որպես «մշակութային արշավ», «ճարտարապետական հուշարձանների յուրացման արշավ»: «Գնման, այսինքն՝ ուրիշի մշակույթի յուրացման արշավից հետո Բաքվում հրատարակվեց «Ադրբեջանական գորգեր» շքեղ, հարուստ նկարազարդումներով ալբոմը»¹⁵, որի կազմողները իրենց անգամ նեղություն չեն տվել որոշ մնուշային գորգերից հանելու հայատառ մակագրությունները, կամ ասենք՝ սիմվոլային նշաններով արտահայտված խաչերը:

Սույն ատենախոսության շրջանակներում արժեքավոր ենք համարում «Սովետական Ղարաբաղ»-ում տեղ գտած բոլոր այն եզակի հրապարակումները, որոնք հնչել են որպես ազգային մշակութային արժեքների պահպանման յուրատեսակ կոչ:

Կարելի է ենթադրել, որ մամուլում արտացոլված մշակութային կյանքը և պատերազմական իրադարձություններն ունեին փոխապայմանավորված ուրույն նկարագիր: Թերթերի առաջադրած խնդիրը մեկն էր՝ ինքնության ու պայքարի ոգու պահպանում, արժեքների սատարում: Այս շրջափուլը նորագույն էր և միաժամանակ անցումային, քանի որ ժամանակի մամուլը հանդես էր գալիս բոլորովին նոր ձևաչափով, միաժամանակ անցում էր կատարվում մի քաղաքական կարգավիճակից մյուսին, իսկ առջևում սպասվում էր անկախության շրջափուլը, որը տպագիր խոսքում արտացոլվեց յուրատիպ թարմացումներով:

Ամփոփելով աշխատանքի այս հատվածը՝ կարող ենք արձանագրել. ադրբեջանական մշակութային գաղափարախոսությունը, որը խնամքով սքողված էր ինտերնացիոնալիզմի շղարշով, իրականացնում էր նախ և առաջ Ղարաբաղը Հայաստանից շրջափակելու, արցախահայությանը ազգային մտածելակերպից, ազգային արժեքներից զրկելու քաղաքականություն: Մշակութային այսպիսի բլրկադան, կործանարար էր և երկար տևել չէր

¹² Պետրոսյան Գ., Մշակույթ. այսօրը և հեռանկարները., «Խորհրդային Ղարաբաղ», 15 մայիս 1990 թ., №86:

¹³Սույն տեղում:

¹⁴Հայ մշակույթը՝ Ադրբեջանի ագրեսիայի օբյեկտ, «ԼՂ հանրապետություն», 10 մայիսի 1997 թ.:

¹⁵Սույնտեղում:

կարող: Ուստի եղավ այն, ինչ պետք է լիներ. ազգային ինքնագիտակցության զարթոնք, պայքար ինքնության համար, որը պետք է զուգակցվեր անկախությանն ու Մայր Հայաստանին միավորվելու բարձր գաղափարին: Իսկ գոյապայքարի վեց տարիների ընթացքում, չնայած ստեղծված սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր վիճակին, մշակույթը նաև մամուլի միջոցով ակտիվ իրականացրեց իր ազգապահպան գործառույթը:

Գլուխ 2.

ԱՐԾԱԽՅԱԼ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՁԻՆԱԴԱԴԱՐԻՑ ՀԵՏՈ (1994-2010 թթ.)

Երկրորդ գլուխը («Արցախյան պարբերականների մշակութային քաղաքականությունը զինադադարից հետո (1994-2010 թթ.)») արտացոլում է հետպատերազմյան շրջանի մշակութային կյանքի պատկերը՝ իր առաջընթացով, զարգացումներով ու դժվարություններով: Այն բաժանված է երեք ենթագլուխների: **Առաջին ենթագլխում** («Մշակութային հիմնախնդիրները խաղաղ տարիներին») ներկայացված է խաղաղ Արցախի մշակութային պատկերը:

Ազգային-ազատագրական պայքարն անկախություն բերեց Արցախի հայ ժողովրդին և նոր հնարավորություններ ստեղծեց հայկական երկու հանրապետությունների միջև հոգևոր ու մշակութային մերձեցման առումով, նորաստեղծ մեր երկրում իրականացվող կրթական ու սոցիալական բարեփոխումների, տնտեսական ու քաղաքական բազում խնդիրների լուծման շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց երկրի մշակութային կյանքի զարգացմանը: Մամուլի ուսումնասիրությունն ի ցույց է հանում կրթամշակութային կյանքում իրականացվող հսկայածավալ աշխատանքները, կրթամշակութային օջախների նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը, լայն թափ առած դպրոցաշինության գործընթացը և այլն: Վերարժևորվեցին ու նոր իմաստ ստացան արցախահայ գրողների ու արվեստագետների «մերժված» ստեղծագործությունները, մաքրվեցին և վերածովեցին վանքերն ու եկեղեցիները, մատուռներն ու խաչքարերը: Արցախյան ազատամարտն ավարտվեց հայերի ռազմաքաղաքական և հոգևոր-մշակութային հաղթանակով, իսկ 1994 թվականի մայիսին կնքվեց զինադադարի արձանագրություն, որով ըստ էության ազդարարվեց հարաբերական խաղաղության շրջանը: Այս պայմաններում նոր կյանք թևակոխեց նաև տպագիր մամուլը: Եթե ազատամարտի տարիներին արցախյան մամուլի բնականոն աշխատանքներին խոչընդոտում էր երկրում ամկա ռազմաքաղաքական իրավիճակը, ապա հետպատերազմյան տարիներին մամուլը դարձել էր սոցիալ-տնտեսական ճգնաժամի, կրթամշակութային ու քաղաքական խնդիրների հաղթահարումն արձանագրող յուրատեսակ կողմնորոշիչ:

Պատերազմի հետևանքով ԼՂ մշակույթի ոլորտում առաջացած հիմնախնդիրների անդրադարձը մամուլում չհետաձգվեց, ընդհակառակը՝ բարձրաձայնվեց, փորձ կատարվեց ցույց տալու ստեղծված իրավիճակից դուրս գալու ճանապարհները:

Եթե հետպատերազմյան տարիների արցախյան մամուլում տեղ գտած նյութերը մշակույթի ոլորտի պատասխանատուների գործունեությունը միայն դրական և կողմնակալ մոտեցմամբ էին զնահատում, ապա արդեն երրորդ հազարամյակի շեմին հանդիպում ենք նաև անաչառ լրագրողական նյութերի, որոնց հրատարակությամբ մամուլն առաջին փորձերն էր կատարում բարձրաձայնելու մշակույթի ոլորտի հիմնախնդիրները:

Անկախության շրջանի մշակութային կյանքն իր ուրույն տեղն ունեցավ պետականաշինության գործընթացում: Նաև մշակութային քաղաքականության միջոցով է այսօր Արցախի ժողովուրդը ձգտում ներկայանալի դառնալ միջազգային հանրությանը:

Արդեն գոյապայքարից հետո նաև ժանրային բազմազանությամբ է կանոնակարգվել լույս ընծայվող թերթերի ու ամսագրերի աշխատանքը: Այս համատեքստում՝ աշխատանքի **երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում** («Մշակութային կյանքի ժանրային նկարագիրը») փորձ է արվել ներկայացնելու մշակութային կյանքն

արտացոլող հրապարակումների ժանրային պատկերը: Այս դիտանկյունից մշակութային հրապարակումների քննությունը թույլ տվեց հասկանալ՝ որքանով էր լուրջ վերաբերվում մշակութային արդեն անկախ Արցախը, արդյո՞ք օրակարգային էր մշակութային իրողությունների խորքային քննությունը, ասել է թե արդյո՞ք վերլուծական ժանրային խումբը տեղ էր գտնում արցախյան պարբերականների էջերում, թե՞ այդուհանդերձ մամուլի օրգանները սահմանափակվում էին իրադարձությունների ներկայացմամբ, այսինքն տուրք էր տրվում տեղեկատվական ժանրախմբի նյութերին:

Արժանին պետք է մատուցել և ասել, որ մշակութային կյանքն արտացոլող **«Ղենո»** թերթի ժանրային նկարագիրը առանձնանում է իր հետաքրքիր ներկայանակով¹⁶: Այսինքն՝ այստեղ մասնագիտական հմտությամբ է օգտագործված ժանրերի ողջ համակարգը: Մշակութային, հոգևոր ու գրական կյանքը մամուլում ներկայացված է դիմանկարի, էսքիզի, տեսական ու պրոբլեմատիկ հոդվածների, երկխոսության, էսսեի, քննադատական ակնարկի, բանավեճի, ռեպլիկի, նամակի և այլ ժանրերով:

Մշակութային խնդիրներ լուսաբանող հոդվածների շարքում առկա են **պրոբլեմային հոդվածները**, որոնցում «հիմնական հարցը հետազոտվում է լայն զուգադրությունների մեջ, կատարվում են համեմատություններ, եզրահանգումներ, զնահատություններ»¹⁷:

Գրական միջավայրի հիմնախնդիրները պրոբլեմային հոդվածի ժանրում հաճախ են քննվում ԼՂՀ Գրողների միության «Եղիցի լույս» պաշտոնաթերթում: **Պրոբլեմային** հետաքրքիր հոդվածներ կան արդի արձակի, մասնավորապես վեպի ու պատմավեպի ներժանրային տեղաշարժերի մասին: Պատմավեպի՝ որպես ժանրի ամենակիրառվող տեսակի և նրա տարբեր ժամանակների ժանրային թարմացումների մասին է գրականագետ Վահրամ Դանիելյանի հոդվածը: Հեղինակը ժանրի նոր դրսևորումները ներկայացնում է Վարդան Գրիգորյանի, Արմեն Մարտիրոսյանի, Վիգեն Խեչումյանի, Պերճ Զեյնունցյանի ստեղծագործությունների օրինակով՝ իրականության զարգացման ընթացքի մեջ տեսնելով վեպի ու պատմավեպի ներժանրային փոփոխությունները. «Ժանրը պիտի նորովի իմաստավորվեր մեր ժամանակում ու ստեղծված իրավիճակում, որի չգոյության ծնունդն էր ինքը և որին հասնելու գերխնդիրն էր նրա ռազմավարությունը»¹⁸: Հայաստանի գրողների միության և «Գրական թերթի» հետ ունեցած սերտ կապերի շնորհիվ ԼՂՀ Գրողների միության «Եղիցի լույս» թերթը շուտով սկսեց հանդես գալ արձակի և պոեզիայի տեսական, վերլուծական ու համեմատական ընդհանրացումներով: Այս առումով հետաքրքիր ու համակողմանի վերլուծությունների իր դաշտն ուներ «Գեղարտ»-ը, որը երիտասարդ գրականասերների համար դարձավ յուրատիպ գրական միջավայր:

Ի տարբերություն գրախոսությունների, մամուլում ի հայտ եկավ **նամակ-գրախոսության ժանրը**: Այստեղ գրախոսն ուներ իր խոսքի հասցեատիրոջը՝ տվյալ ստեղծագործության հեղինակին: Ուշագրավ է **գրական երկխոսության** ժանրը: «Եղիցի լույս» պաշտոնաթերթում «Հրավիրում ենք բանավեճի» խորագիրը հաճախակի է ներկայացնում գրական այն երկխոսությունները, որոնք շոշափում են գրական միջավայրի զարգացումներին առնչվող հարցեր. հայ պոեզիայի սերնդափոխություն՝ պոեզիայի տիրույթում ընդհանրական ու միաժամանակ այլ օրինաչափությունների ձևավորմամբ: Բանավիճային երկխոսությունը թերթի հաջորդ համարներում արձագանքվում է, այսպես կոչված, գրական **բանավիճային մենախոսության** ձևով: Երիտասարդ գրականագետ Արմեն Ավետիսյանը լավ բանաստեղծության չափանիշ է համարում գեղարվեստականությունը՝ համարելով այն ժամանակակից պոեզիայի «կարևոր բացակայություններից»¹⁹: «Անգամ Բողլերը տգեղ նկարագրելու միջոցով միտում ուներ ավելի ցայտուն գույներ հաղորդել գեղեցիկին»²⁰: Գրականագետը կարևորում է հատկապես գրական

¹⁶Մենենշյան Ա. Ռ., ժանրային զարգացումներ. ընդդեմ, թե՞ հանուն ժանրագիտության, Պատմության հարցեր, Պրակ 1, Երևանի համալսարանի հրատ., 2009 թ., էջ 138:

¹⁷Քալանթարյան Ժ., Գրական քննադատության տեսության և պատմության հարցեր, Երևան, Երևանի համալս. հրատ., 1982, էջ 168:

¹⁸«Եղիցի լույս», 2008 թ. N7-8, էջ 3:

¹⁹«Եղիցի լույս», 2010 թ. N5-6, էջ8:

²⁰Նույն տեղում:

ավանդույթների՝ արմատի խնդիրը, քանի որ նոր բանաստեղծությունը նորանոր ձևեր է ընդօրինակում եվրոպական ու ամերիկյան պոեզիայից: «Չայկականության բացակայություն կա արդի հայ պոեզիայում»²¹:

Հրապարակախոսությունն ավելի հաճախ նկատվող ժանրերից է, որով հոդվածի հեղինակները բարձրացրել են գրական-մշակութային կյանքին առնչվող հարցեր, խնդիրներ կամ պարզապես հանդես եկել տեսական հաշվետվություններով: Վերլուծական-հրապարակախոսական հոդվածների թիվը մեծ է «Եղիցի լույս» պաշտոնաթերթում: Սերգեյ Սարինյանի գրականագիտական հրապարակախոսությունն արտացոլված է երկու հարցադրման համատեքստում. «Չայ գրականությունը համաշխարհային գրականության համաբնագրում» և «Ժամանակակից գրականությունը հարափոփոխ աշխարհում» և նրա համապատկերը 20-րդ դարում: Այս հարցադրումներում էլ արտացոլված են տաղանդավոր գրականագետի տեսական հետաքրքրությունն ներկայացնող վերլուծությունները, համաձայն որոնց «Գրականությունը ոչ թե իրականության պատկերն է, այլ իրականության պատկերացումը, և աշխարհն «իրականանում է» գրողի զգայությունների պրիզմայով՝ փոխակերպելով գրականության թե՛ ձևը և թե՛ բովանդակությունը»²²:

Ձինադադարից հետո ակնառու էր **ակնարկի** ժանրի կիրառումը, որով ըստ էության կերտվում էին կերպարներ ու դեմքեր, և սա անհրաժեշտ էր հետպատերազմյան սերնդին: Ակնարկի հերոսները հիմնականում մշակույթի ու գրական միջավայրի հայտնի դեմքեր են՝ երգարվեստի ու թատերարվեստի երախտավորներ, անվանի գրողներ ու դերասաններ:

Արցախյան մամուլում գրական թեմատիկայի նյութերում, առավել հաճախ հանդիպող ժանրը **գրախոսությունն** է, որն իրենից յուրատիպ վերլուծություն է ներկայացնում: Այս ժանրաձևին հիմնականում հանդիպում ենք Գրողների միության «Եղիցի լույս» թերթում և «Գեղարմ» հանդեսում: «Ազատ Արցախն» ու «Լուսարարը» ևս նախապատվություն են տալիս գրախոսության ժանրին: Եվ «Քանի որ գրախոսության հիմքը կազմում է վերլուծությունը, ապա անհրաժեշտ է, որ այն լինի ամբողջական և օբյեկտիվ»²³: Կարելի է ասել, որ գրախոսվում են Արցախում հրատարակվող բոլոր գրքերը:

Պետք է նկատել, որ արցախյան տպագիր խոսքում, ի հակակշիռ հայաստանյան մամուլի, նվազ են **գրաքննադատական դիմանկարի** ժանրով ներկայացված նյութերը. այն է՝ «որոշարկել այս կամ այն հեղինակի ստեղծագործական համակարգն ու գրական ընթացքի մեջ գրաված տեղը»²⁴: Առկա նյութերի հեղինակները հիմնականում Չայաստանի գրական դաշտում հայտնի երիտասարդ և ավագ սերնդի գրաքննադատներն են (Ս. Սարինյան, Ա. Նիկողոսյան): Իսկ ահա **դիմանկարի** ժանրում, որը ԼՂՀ Գրողների միության «Եղիցի լույս» պաշտոնաթերթի մշտական խորագրերից է, մշտապես ներկայացվում են երիտասարդ գրողներն ու գրաքննադատները կամ պարզապես գրական-մշակութային ակտիվ կյանքով ապրող երիտասարդները: Ըստ որում հրապարակված դիմանկարները հաճախ ուշագրավ են դառնում արցախյան գրական, հոգևոր ու մշակութային դաշտի առկա միտումների և իրողությունների նկարագրմամբ:

Ցանկալի կլիներ արցախյան տպագիր խոսքի էջերում ընթերցել նաև հայաստանյան մամուլում («Գարուն», «Նոր դար») արդեն հաճախ հանդիպող քննադատական երկխոսությանը, որի արդյունքում ոչ միայն կբացահայտվեին գրական-ստեղծագործական դաշտի որոշ խնդիրներ, այլև, ինչու չէ, ընթերցողի մոտ կձևավորվեին աշխարհայացքային ու գեղարվեստական արժեքավոր կողմնորոշիչներ:

Աշխատանքի երրորդ ենթաբաժնում (**«Գրական բանավեճը արցախյան մամուլում»**) անդրադարձել ենք մամուլում արտացոլված գրական այն բանավեճերին, որոնք այս կամ այն չափով առնչվում են Արցախի մշակութային իրականությանը:

Գրական կյանքի ակտիվությունը կարելի է պայմանավորել նաև թերթերում առկա գրական և մշակութային բանավեճերի առկայությամբ: Բանավեճն արցախյան մամուլում տարակերպ է ներկայանում: Գրավոր տեքստի շրջանակներում դրանք ի հայտ են գալիս ուղղակի՝ թշնամանքի լեզվով, որտեղ շրջանցված են բանավիճային էթիկայի բոլոր կանոնները: Նույն կամ տարբեր պարբերականների էջերում հերքում են միմյանց տեսակետները,

²¹ Նույն տեղում:

²² «Եղիցի լույս», 2010 թ. N9-10, էջ2:

²³Тертычный А.А., Жанры периодической печати, Москва, «Аспект Пресс», 2000, www.evartist.narod.ru.

²⁴ Գրիգորյան Ս., Գրական մամուլ-1995. Քննադատություն, «Գրական թերթ», 1996, թիվ 8:

մեկ և ավելի հրապարակումներով և անուղղակի՝ այս դեպքում ակտիվ է կողմերից մեկը, մյուսի պատասխանը չի ակնկալվում: Անուղղակի դրսևորումներից մեկն էլ, որ հաճախ ենք հանդիպում մամուլում, նույն հրապարակման ներսում «ներբանավիճային իրադրության ստեղծումն է, երբ հեղինակն ընդդիմադիր կողմի փաստարկները սեփական բառերով շարադրում, ապա հերքում է իր կարծիքով «առավել տրամաբանական» հակափաստարկներով»:²⁵

Գրեթե բոլոր գրական բանավեճերում էլ կարելի է հանդիպել Ս. Պովարնինի՝ վեճերի դասակարգման վրա հիմնված տեսակների, մասնավորապես. ա) վեճ ճշմարտությունը բացահայտելու նպատակով, բ) վեճ, որի նպատակը հակառակորդին համոզելն է, գ) վեճ հանուն վեճի, դ) վեճ հակառակորդին անպայման հաղթելու նպատակով և այլն²⁶:

Հայտնի իրողություն է, որ բանավիճում են գաղափարական տարբեր դիրքորոշումներ ունեցող պարբերականները: Սակայն արցախյան տպագիր թերթերի սակավությունն ու տպագրվող թերթերի պարբերականությունը բանավիճող կողմերին հնարավորություն չի տալիս միշտ նույն տպագիր օրգանների հասցեներից պատասխան բանակռիվներ վարելու: Եվ բնականաբար, ընթերցողներն «ստիպված են լինում» հետևել տարբեր լրատվամիջոցներում տպագրվող պատասխան հոդվածներին ու արձագանքներին: Թերևս նույնը կարելի է ասել նաև հրապարակումների քանակի ու քննարկվող թեմայի ընդլայնման մասին:

Արցախի ետպատերազմյան շրջանի պարբերական մամուլում առաջին անգամ (1998 թ.) հանդիպում ենք մշակույթի գործիչների և մշակույթի ոլորտի պաշտոնյա այրերի «թերթային բախման», որը, ելնելով երկրում ստեղծված հասարակական-քաղաքական պայմաններից, ժամանակի պահանջով ծնված բնական վերաբերմունք ու արձագանք է:

Արցախյան շարժման տասնամյակին երկրում աստիճանաբար ստեղծվում էին հասարակության բարվոք կենսունակության համար ամենակարևոր պայմանները: Սակայն անթաքույց էր, որ մշակույթի ոլորտը դեռևս կարիք ուներ վերանայման և հավուր պատշաճի ուշադրության: Արցախցի մի խումբ մտավորականների բաց նամակը ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանին և վարչապետ Ժ. Պողոսյանին փորձ էր պաշտոնատար անձանց ուշադրությունը սևեռելու մշակութային ոլորտի հիմնախնդիրների վրա: Նամակի վերնագիրն արդեն իսկ հուշում էր արվեստագետների ապագա ասելիքը՝ «Որ մեզ չսպառնա ոգու սովը»: Խոսելով հետպատերազմյան տարիներին Արցախում ստեղծված մշակութային դաշտի անկայուն վիճակից՝ հեղինակները առաջին անգամ հանրապետության պաշտոնաթերթ «Ազատ Արցախ»-ի էջերից կատարում են միանգամայն տեղին դիտողություններ ու կիսում իրենց մտահոգությունները. «Ցավով արձանագրում ենք, որ վերջին տասնամյակը Արցախի հոգևոր-ստեղծագործական դաշտում առավել բնորոշվեց անկունային դրսևորումներով, քան կայունությամբ ու առաջընթացով: Արվեստային-մշակութային ընդհանուր կացությունը վայրընթաց է՝ ի հակասություն արցախյան ազատամարտի ներքին տրամաբանության, որ, նախևառաջ, հոգևոր-ազգային է, ուստի և՛ ստեղծագործական վերելք թելադրող»²⁷: Չհամաձայնելով այն մտքի հետ, որ ոլորտում առկա իրավիճակը պայմանավորված է երկրի տնտեսական վիճակի վատթարացմամբ՝ նամակի հեղինակները գրում են. «Ո՛չ: Մեր հոգևոր դաշտը հնարավոր է կենսունակ պահել՝ չկապելով այն սոսկ տնտեսական բարվոքացման հեռանկարին: Մշակութային նահանգի գլխավոր պատճառն է պետության ոչ հստակ մնացորդաց վերաբերմունքն առ հիշյալ ասպարեզը»²⁸:

Հարկ է նշել, որ հիշյալ ժամանակահատվածում պետական հոգածությունից դուրս էին մնացել ստեղծագործական միությունները: Արվեստագետները ստեղծված իրավիճակի համար «մեղադրականներ» էին ներկայացնում ոչ միայն պետական այրերին, այլ նաև իրենց՝ արվեստագետներին. «Համուն արդարության խոստովանում ենք, որ առկա վիճակի համար պատասխանատու ենք նաև արվեստագետներս՝ երբեմն մեր հայեցողական կեցվածքով»²⁹: Ստեղծագործական ոգու թուլացման վտանգը կանխատեսելով, արցախցի

²⁵ Տե՛ս Պետրոսյան Դ., «Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում», Երևանի համալս. հրատ., 2007, էջ 20:

²⁶ С. И. Поварнин, Спор.О теории практики спора, ПГ., 1918, с. 22-25:

²⁷ «Ազատ Արցախ», 15 դեկտեմբերի, 1998թ., #143(690), էջ 6:

²⁸ Նույն տեղում:

²⁹ «Ազատ Արցախ», 15 դեկտեմբերի, 1998թ., #143(690), էջ 6:

մտավորականները ահագանգում էին, որ եթե նման մթնոլորտն իշխի, ապա երկիրը կզրկվի իր բարոյական նկարագրից, այնուհետև նաև՝ արվեստագիտական ջոկատից. «Այս անցանկալի ընթացքը չկանխելու դեպքում մոտ ապագայում մեզ իսկապես կսկսի սպառնալ ոգու սով»³⁰:

Նամակի առաջին պարբերության մեջ քննադատական մոտեցմամբ ներկայացված է հետպատերազմյան Արցախի մշակութային դաշտը, իսկ երկրորդ հատվածն ավարտվում է ստեղծված իրավիճակի դրական լուծմանը միտված հնարավոր քայլերը ներկայացնող կոչ-առաջարկով. «Մեծարգո նախագահ և վարչապետ, կոչ ենք անում Ձեզ վճռականորեն շրջվել գեղարվեստի աշխարհի ուղղությամբ: Առաջարկում ենք որպես առաջին քայլ նախագահին կամ կառավարությանը կից ստեղծել մշակույթի հարցերի հանձնաժողով, նրանում ընդգրկելով արհեստավարժ արվեստագետների ու շահագրգիռ անձանց»: ... Այս ժամանակահատվածում և մեր պայմաններում պետությունը պետք է իրեն թիվ մեկ պատասխանատուն համարի մշակութային հիմնախնդիրների համար»³¹:

Նույն թերթի էջից «Բանավեճ» բաժնում (չնայած նախորդ նյութը տեղադրվել էր «Մշակույթ» բաժնում) «Ինչու՞ են աղմկում «ոգու» գուշակները» վերտառությամբ իրենց պատասխան-նամակով հանդես են գալիս ԼԴՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարի պաշտոնակատար Արմեն Սարգսյանը և նախարարի տեղակալ Արկադի Թովմասյանը: Եթե առաջին նամակում փորձ է արվում երկրի հոգևոր-մշակութային դաշտի հիմնախնդիրների վրա կենտրոնանալ, ապա երկրորդ նամակին հատուկ է շեշտակի տոնը և նախահարձակ շարադրանքը. «Մեզ խիստ զարմացնում է նամակագիրների վերամբարձ ոճը և իրենց չնչին թթխմորով ողջ խմորը թթվեցնելու անհագ ձգտումը»³², օգտագործված ածականներից՝ «ոգու գուշակներ», «մշակույթի առաքյալներ», ինչպես նաև ծաղրական դիրքորոշումից՝ «խորհուրդ կտայինք, պարոնայք, վայելել ձեր ազատությունն ու ինքնուրույնությունը»³³: Հոդվածում նամակագիրներին անվանում են «ոգու գուշակներ», անդրադառնում յուրաքանչյուր մտավորականի անուն առ անուն և յուրաքանչյուր նախադասություն «քննության առնում», հիշեցնում մշակույթի նախարարության կողմից ստացած ֆինանսական աջակցության, մրցանակների մասին: Օրինակ՝ «Շուտ է մոռացել պարոն Հարությունյանը (Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն և գեղարվեստական ղեկավար), որ մեկուկես տարի առաջ իր ղեկավարած դրամատիկական թատրոնը և ԼԴՀ երգի-պարի պետական համույթը, խրված լինելով պարտքերի մեջ, գտնվում էին լուծարման եզրին, և միայն պետության ու մասամբ արտերկրի բարերարների շնորհիվ նրանք սկսեցին վերելք ապրել»³⁴:

Սարգսյանը և Թովմասյանը փորձում են գուշակել բաց նամակի հնարավոր դրդապատճառները՝ գտնելով, որ «ամեն մեկը յուրովի խիստ անձնականացված խռովք ունի, որն էլ, վերջի վերջո, արտահայտվեց բաց նամակի տեսքով»³⁵: Նամակագիրների հասցեին, ովքեր իրենց թույլ են տվել վերլուծել ԼԴՀ մշակութային կյանքը և «իրենց բարձունքից մեծահոգաբար հրամցնում են իրենց աստվածային պատվիրանները», հնչում են նաև հորդորներ³⁶: Հեղինակների սարկազմով ու վիրավորական նոտաներով հագեցած վերաբերմունքը շարունակվում է նամակի ողջ ընթացքում: Առաջին նամակագիրների կողմից պատասխան հողվածի ոչ հաջորդ, ոչ էլ հետագա համարներում մենք չհանդիպեցինք:

Այլ է պատկերը զուտ գրական բանավեճերի համատեքստում: Գրական կյանքին առնչվող հարցերում տպագրական տարածքն արցախյան լրագրողներն ու բանավիճող կողմերը ոչ միշտ են նպատակային օգտագործում: Եվ չնայած բազմակարծության առկա իրողությանը՝ արցախյան մամուլը մասամբ շարունակում է մնալ փակ, քանի որ ճշմարտության վերհանումն, ինչպես տեսնում ենք, հաճախ ուղեկցվում է նեղ անհատական մոտեցմամբ: Շփոթելով «հարաբերությունները պարզելու» միջավայրի հետ՝ լրագրողները սեփական մեկնաբանություններում զերծ չեն մնում վիրավորանքներից, որակումներից, պիտակավորումներից: Այս առումով տեղին

³⁰Նույն տեղում:

³¹Նույն տեղում:

³²«Ինչու են աղմկում «ոգու գուշակները», «Ազատ Արցախ», 19 դեկտեմբերի, 1998 թ. #145(692), էջ 2:

³³Նույն տեղում:

³⁴Նույն տեղում:

³⁵Նույն տեղում:

³⁶Նույն տեղում:

է նշել նաև արցախյան լրատվադաշտի՝ բանավիճային ժանրում լրագրողական էթիկայի կանոնների և սկզբունքների բացակայության մասին: Մինչդեռ էթիկական նորմերի առկայությունը ենթադրում է լրագրողի բարոյական դիրքորոշում՝ լրագրողական էթիկայի սկզբունքների հիմքում նախանշելով օբյեկտիվ լրագրությամբ լսարանի նվաճում: Գրական բանավեճերն երբեմն հասնում են այնտեղ, երբ պատասխան հողվածներում սկսվում են քննարկման նյութ դառնալ Գրողների միության ֆինանսական փաստաթղթերի ստուգման արդյունքները, և վկայակոչվում Գրողների միության նախագահի գործուղման օրերի ու ծախսերի թվերը, կամ համեմատության մեջ դրվում միության կողմից կազմակերպվող միջոցառումների նախահաշիվներն ու կազմակերպված միջոցառման մակարդակը: Արդյունքում մի կողմ են դրվում հոգեմտավոր բոլոր պահանջները և քննարկվում են բանավեճի բուն թեմայից շեղված երկրորդական թեմաներ:

Հայ հասարակական-քաղաքական, ազգային մտքի ու մտածելակերպի արժարժան ձևն ու բովանդակությունը, մանուկում հարցերի ձևակերպման և պատասխաններ գտնելու, եզրահանգումներ կատարելու թերացումները վկայում են, որ հայ իրականության մեջ, որպես կանոն, բանավեճը, հիմնականում չի կայանում: Այս համատեքստում թերթերի, հեղինակների գրական կամ գաղափարական կողմնորոշումների ու գեղագիտական ըմբռումների հետ մեկտեղ գերիշխող են դառնում առանձին անհատների անձնական վրեժխնդրությունները, որոնք բացասաբար են ազդում գրական միջավայրի ներքին զարգացումների վրա:

«Մանուկը դեր ունի խաղալու նման քննարկումներում, այն է՝ ապահովել, որ դրանք լինեն համամասնակցային, երանգավորված, ճշգրտորեն սահմանեն, թե հասարակության որ հատվածում է տվյալ բանավեճը և որոնք են համաձայնության հնարավոր եզրերը»³⁷:

Բանավեճն ու քննարկվող թեման անձնականացնելով՝ ընթերցողը հեռանում է բուն թեմայից: Ի վերջո, բանավեճը ոչ թե միջանձնային, այլ գաղափարական հակադրություն է, որ համոզիչ ու անսխալ փաստարկներով բանավիճային առողջ միջավայր պիտի ստեղծի:

Գլուխ 3.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Ազգային ինքնությունը դիտելով մշակութային իրողության կենսական բաղադրիչ՝ աշխատանքի **երրորդ գլուխը** վերնագրել ենք՝ «Մշակութային ինքնության հարցերը արցախյան մամուլում»:

Ինչպես հետխորհրդային մի շարք երկրներում, Արցախում ևս, մշակութային գլոբալիզացիայի և տեղեկատվական անվտանգության պայմաններում ազգային ինքնության պահպանման հարցը սրությամբ է դրվում: Ինքնությունը անհատի ինքնագիտակցության այն կողմն է, որն առնչվում է նրա՝ այս կամ այն սոցիալական խմբին պատկանելուն, և որը նրա համար արժեքային նշանակություն ունի: Սոցիալական ինքնությունն անհատի դրական ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող կարևորագույն հանգամանք է³⁸: Ավելին, կարելի է ասել. «Ինքնությունը առաջին և ամենահիմնարար պահանջումն է անհատի համակարգում, որը պահպանվում և զարգացվում է սոցիալական փոխազդեցությունների օգնությամբ»³⁹: Այսինքն՝ մշակույթը՝ որպես սոցիալական փոխազդեցությունները կարգավորող բաղադրիչ առանցքային տեղ ունի ոչ միայն անձնային ու ազգային պատկանելության, այլև ինքնության ձևավորման գործում:

Անկախության երկրորդ տասնամյակում երկարաձգվող համակարգային փոփոխությունները, սոցիալ-տնտեսական ու բարոյաքաղաքական փոխակերպումները Արցախում հանգեցրին նրան, որ մշակութային հիմնախնդիրներն ու դրանցով զբաղվող բազմաբնույթ հիմնարկները գործնականորեն հայտնվեցին անորոշության մեջ՝ ենթարկվելով օտարածին, ցածրարժեք մշակութային ազդեցությունների: Արևելյան մոտիվներով մեղեդիներն ու հագուստը, ցածրաճաշակ ֆիլմերն ու հեռուստատարտադրանքը, կրոնական կազմակերպությունները,

³⁷Կովաչ Բ., Ռոզենշթայլ Թ., «Լրագրության հիմունքներ», «Ինտերնյուս», Հայաստան 2003 թ., էջ 136:

³⁸Այունց Ա., Ինքնության հիմնախնդիրները դարաբաղյան հակամարտության համատեքստում, Ինքնությունը և փոփոխվող աշխարհը, միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Լինգվա» հրատ., 2008, էջ 13:

³⁹Նույն տեղում:

խաղատները մտան արցախյան հոգևոր-մշակութային տարածք: Սոցիալ-տնտեսական խոցելի կացությունը, շուկայական դեռևս անհասկանալի հարաբերությունները, աշխարհի տարբեր ծայրերից մեզ հասնող տեղեկատվական հոսքերը ծնեցին ազգային, ավանդական, մշակութային ժառանգության անարժեքության անառողջ տրամադրություն: Ձևավորվող նոր հարաբերություններում ազգային, բարոյական, գեղագիտական արժեքներին փոխարինելու եկան ժամանակավոր, օտարածին ու կեղծ հրապուրանքներ: Ազգային մշակութային ժառանգությունն ապահովող սերունդը սկսեց ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել: Բնական է, որ այս բոլոր փոխակերպումների արձանագրողն ու քարոզողն առաջին հերթին լրատվադաշտն է՝ իր բոլոր դրսևորումներով, այդ համատեքստում՝ նաև մամուլը:

Այս գլխում փորձել ենք հիմնավորել և ներկայացնել մշակույթի՝ որպես սոցիալական փոխազդեցությունները կարգավորող բաղադրիչի և մշակութային տեղեկատվական քաղաքականության առանցքային դերը ինքնության ձևավորման գործում:

Ինքնությանն առնչվող հրապարակումները հիմնականում վերաբերում են Արցախի պատմությանը, պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրմանն ու պահպանմանն ուղղված աշխատանքներին, հին ավանդույթների ու արհեստի ձևերի վերակենդանացմանը, անհետացած եզրին գտնվող ժողովրդական նվագարանների պահպանմանը, ճիշտ երաժշտություն քարոզելուն և այլն: Ինքնության պահպանումը առանձնապես հետաքրքիր երանգներ է ստանում հայ-ադրբեջանական կոնֆլիկտի լուծման՝ հարաբերական անդորրի պայմաններում:

Արցախյան մամուլում շատ են այն հրապարակումները, որոնք ընդգծում են ինքնության պահանջմունքի ու պատմական հիշողության վերակենդանացման նշանակությունը և նպաստում ազգային ինքնագիտակցության ձևավորմանն ու ամրապնդմանը: Բնավ պատահական չէ, որ ինքնությանն առնչվող հրապարակումների ծանրակշիռ մասը վերաբերում է պատմական հուշարձաններին ու մշակութային այն արժեքներին, որոնք «վերակառուցում են» ընթերցողի հիշողությունը՝ նպաստելով ինքնության, ազգային պատկանելության զգացողության արմատավորմանը:

Ինչպես գոյապայքարի, այնպես էլ անկախության ու պետականաշինության գործընթացում մշակութային ինքնությանն առնչվող բոլոր հրապարակումները հանդես են գալիս որպես արժեքմաստային ուրույն համակարգ: Պատահական չէ, որ մամուլը Արցախի քաղաքական խնդրի կարգավորումը կապում է ինքնորոշման իրավունքի հետ: Ինքնորոշման ու ինքնության միջև առկա ֆենոմենոլոգիական կապը փոխադարձ ու փոխապայմանավորված է:

Ինքնության առնչվող հրապարակումները դիտարկել ենք ազգային ինքնության կառուցվածքում հիշողության դերի մասին հետաքրքիր դիտարկումների համատեքստում: Ամեն սերունդ իր հետ բերում է ազգային ինքնության սեփական մեկնաբանությունները, այդ պատճառով դրանք երբեք հաստատապես արձանագրված կամ ստատիկ չեն, այլ վերակառուցվում են՝ ի պատասխան նոր պահանջների, հետաքրքրությունների և պատկերացումների, չնայած միշտ էլ գտնվում են որոշակի շրջանակների մեջ⁴⁰:

Արցախյան տպագիր խոսքում անցյալի դերը շատ լավ է օգտագործվում ոչ միայն ինքնության պահպանման, այլև ներկան ճիշտ կառուցելու համար:

Անհատի էթնիկ ինքնության կառուցվածքում իր ուրույն տեղն ունի հոգևոր կյանքը, մասնավորապես տոնածիսական համակարգը: Ազգային-կրոնական տոների և հիշատակի օրերի նշումները մեր օրերում ևս հանդես են գալիս որպես էթնոմիավորիչ (էթնոտարբերիչ) գործոններ, պատմական անցյալի շուրջ պատկերացումների համակարգի գիտակցման ցուցիչներ: Հիշողության և ինքնության հարցերով զբաղվող հայտնի մտածող Էդվարդ Շիլսի (Edward Shils)՝ ավանդույթի մասին կոնցեպցիայի (1981) համաձայն, անցյալն է կերտում ներկան: Է. Շիլսի դիտարկմամբ, արդեն անցած դարաշրջանի կամ պատմական անձի կերպարը ոչ թե ամեն հաջորդ սերնդի կողմից նորովի ձևակերպվում ու զարգացվում է, այլ փոխանցվում է համաձայն ուղղորդող օրինակի» (guiding patterns), որն ապահովում է հետագա, հաջորդող սերունդները ընդհանուր ժառանգությամբ: «Կայուն հիշողությունները, ստեղծելով կապեր ողջերի ու մեռածների միջև,

⁴⁰Anthony D. Smith, *Myths and Memories*, p. 180-181:

ամրացնում են հասարակության ժամանակավոր ինտեգրացիան»⁴¹ և նպաստում ներդաշնակության, համաձայնության կայացմանը ժամանակի ընթացքում:

Տպագիր մամուլը արտացոլում է եկեղեցական բոլոր տոնակատարությունները, որոնք տեղի են ունենում Արցախի տարածքում և եռանդուն պայքար տանում աղանդավորական շարժումների դեմ քարոզելով հոգևոր անվտանգություն ու քրիստոնեական միաբանություն:

Աշխատանքի այս հատվածում անդրադարձ է կատարվել նաև համաշխարհայնացման կոնտեքստում մշակութային ինքնության եությանը: Մշակութային համաշխարհայնացումը այսօր թույլ չի տալիս փակ տարածք հանդիսանալ: Արդի փուլում այս հիմնախնդիրը գտնվում է ինչպես հայ, այնպես էլ օտարազգի գիտնականների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Արցախի օրինակով, մշակույթի համաշխարհայնացման հիմնախնդիրն և նրա արցախյան մոդելի առանձնահատկություններին նվիրված հատուկ ուսումնասիրությունների, որոնք կներառեն այս գործընթացների ողջ բազմակողմանիությունը, չենք հանդիպում: Մինչդեռ հետաքրքիր է այն դիտարկել լրագրագիտական վերլուծության տեսանկյունից: Պետք է նշել, որ արցախյան մամուլում լուսաբանվող նյութերը երևույթի սոսկ մակերեսային դիտարկումներ չեն: Ազգային ինքնությունը խեղաթյուրող իրողությունները ներկայացված են սուր քննադատության պիզմայով: Մամուլի էջերից արցախցի արվեստագետները անդրադառնում են համաշխարհայնացման՝ մշակույթի առանձին ուղորտներ, օրինակ՝ կերպարվեստ մուտք գործելու մասին. «Մեր հայացքը բևեռելով դեպի Եվրոպա, չպետք է մանակենք նրա ամեն մի քայլը: Անցած դարի 20-ից 40-ական թվականներին կերպարվեստ են թափանցել տարբեր ուղղություններ, այսպես ասած՝ «իզմ»-եր, սակայն դրանց շատ կարճ կյանք էր վիճակվել: Ժամանակ առ ժամանակ դրանք ներթափանցել են մեր միջավայրը, բայց այդ հոսանքները մնայուն չեն եղել»: Վերջում արվեստագետները գալիս են այն մտահանգման, որ «ճիշտն այն է, երբ հենվում են ազգային արժեքների վրա»⁴²:

«...Ուտք դնելով երրորդ հազարամյակի շեմին, շարունակելով 21-րդ դարաշրջանի ժամանակի չափումը, դար, որին հատուկ էր գլոբալ տեղաշարժեր համաշխարհային հանրության կյանքում, մշակութային, տնտեսական, բարձր հաղորդակցական ինտեգրացիաներ, մենք պետք է առավել քան երբևէ գիտակցենք մեր մշակույթի դերն ու նշանակությունը համաշխարհային մշակույթների միջակայքում»⁴³ Իր հարցադրումներով ու մեկնաբանություններով Արցախի տպագիր մամուլը յուրատիպ ձևով է պայքարում համաշխարհայնացման գործընթացների դեմ:

Մշակութային համաշխարհայնացմանն առնչվող խնդիրները բարձրացվում են նաև մշակույթի, հասարակական-քաղաքական գործիչների հետ կազմակերպվող տարբեր հարցազրույցներում:

Տպագիր խոսքը անդրադառնում է նաև մշակութային գլոբալիզացիայի դրական կողմերին՝ մատնանշելով ինտեգրման օգտակար չափերը:

Առհասարակ աշխարհի բոլոր էթնոսների հոգևոր մշակույթում ժողովրդական հավատալիքներն իրենց վաղնջականությամբ և ավանդականությամբ կազմում են ամենապահպանողական շերտը և դժվար են ենթարկվում նորացման կամ փոխակերպման: Դրանք, անցնելով կրոնների տարբեր համակարգերի միջով, գրեթե չկրելով ազդեցություններ՝ շարունակում են պահպանել իրենց վաղնջական կենսունակությունը՝ հասնելով մինչև մեր օրերը⁴⁴:

Արցախյան մշակույթի և ազգային ինքնության կենսունակությունը մամուլի էջերում պահպանված է նաև բանահյուսության միջոցով: Այս առումով շնորհակալ աշխատանք է կատարել «Դեմո» ընդդիմադիր թերթը: Բանահյուսական արժեքներին նվիրված հրապարակումները ազգային ոգու արտացոլումներ են և մշակույթի ժառանգության պահպանման ու փոխանցման միջոց:

⁴¹E. A. Shils, Tradition. Chicago, 1981, p. 31-32; Michael Schudson, The Present in the Past.

Հղվում է ըստ Barry Schwartz, Social Change and Collective Memory, p. 222:

⁴²Հովհաննիսյան Ն., Արվեստագետին կարող է գայթակղել անգամ օրվա աննշան թվացող գեղեցիկ պահը, «Ակունք», 6 մարտի 2007 թ., էջ 11:

⁴³Բալայան Ս., Մշակույթ. տարվա արդյունքները սպասելիքների կտրվածքում, «Ազատ Արցախ», 31 դեկտեմբերի 2002 թ., էջ 4, # 153 (1367):

⁴⁴Հմայակյան Հ., Զրույցներ հայ մշակույթի մասին, «Նորավանք» գիտակրթական համալիր, Եր., 2008 թ., էջ 15:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում թերթում տպագրված բանահյուսական այն արժեքները, որոնք արտացոլված են Արցախի ենթաբարբառների ձևով: Այսինքն՝ մի դեպքում բարբառային հարուստ միջավայրի պահպանումը, իսկ մյուսում՝ հետաքրքիր ավանդապատումների արտացոլումը ինքնության ամրապնդման յուրատիպ գործառույթ են կատարում: Ղարաբաղի տեղանունների, ենթաբարբառների, տարբեր բնակավայրերին բնորոշ կենցաղի, ապրելակերպի ու սովորույթների մասին պատմող այսպիսի պատմությունների շարքը բավականին երկար է, ինչը հետաքրքրում է ընթերցողին՝ մոտեցնելով նրան ազգային ինքնությանն ու ակունքներին: Թերթը հատվածաբար ներկայացնում է ոչ միայն արցախյան ավանդույթների հավաքագրման պատմությունը, աղերսնրը ժողովրդական բանահյուսության այլ ժանրերի ստեղծագործությունների հետ, ժանրային ու իմաստային ընդհանրություններն ու առանձնահատկությունները, այլև ավանդախոսների կենսագրական տվյալները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության վերջին՝ **«Եզրակացություններ»** բաժնում ներկայացված են մեր ուսումնասիրության հիմնական արդյունքները:

1. Ի դեմս խորհրդային գաղափարախոսության մենք առնչվում ենք ինտերնացիոնալ մշակույթի արմատավորման հետևողական քաղաքականությանը: Ադրբեջանական մշակութային գաղափարախոսությունը, որը խնամքով սքողված էր ինտերնացիոնալիզմի շղարշով, իրականացնում էր նախ և առաջ Ղարաբաղի՝ Հայաստանից շրջափակելու քաղաքականություն: Մշակութային այսպիսի բլոկադան կործանարար էր տարբեր ասպեկտներով: Կար հստակ մշակված ձևախելված ինտերնացիոնալ մշակութային քաղաքականություն, ինչը յուրօրինակ ագրեսիա էր տարածքում ապրող մարդկանց մշակութային պատկերացումների հանդեպ և խորացրեց միջէթնիկ լարվածությունը, հանգեցրեց նրան, որ հայերը փորձեցին տեր կանգնել իրենց մշակութային ժառանգությանը:

2. Գոյապայքարի առաջին տարիները պայմանավորեցին արցախահայ մամուլի վերածնունդը: «Արցախ» (նախկին «խորհրդային Ղարաբաղ»), «Պայքար», «Ապառաժ», «Պըլը-պուղի» և մյուս պարբերականները դարձան ժողովրդի կյանքի իրական տարեգիրները: Նրանց առաջադրած խնդիրների մեջ առանցքայինը ազգային ինքնության ու պայքարի ոգու պահպանումն էր, որոնցով պայմանավորված էին այդ տարիներին մշակույթի և պատերազմի փոխառնչությունների լուսաբանման յուրահատկությունները:

3. Ադրբեջանական կապանքներից ազատագրված մամուլը 1990-ականների սկզբին չէր մոռանում իր մշակութապահպան գործառույթը՝ պատերազմող հանրությանը մոտ պահելով երկրի մշակութային կյանքի զարկերակին (Արցախի պատմամշակութային արժեքների նորովի մեկնաբանություններ, թատերական ներկայացումներ արտակարգ դրության պայմաններում, գրականության, կերպարվեստի մեջ նոր ստեղծագործությունների, համերգների, հյուրախաղերի լուսաբանումներ և այլն):

4. 1994-2010 թթ. արցախյան մամուլն ավելացել էր գրեթե 90 ամուն թերթով, որոնցից յուրաքանչյուրն իր որոշակի ներդրումն ուներ երկրամասի լրատվադաշտում մշակութային-գաղափարական քարոզչություն իրականացնելու գործում:

5. Զինադադարի տարիներին մամուլում նորովի արժևորվեցին արցախցի արվեստագետների ստեղծագործական հաջողությունները: Գրականություն, քանդակագործություն, երաժշտություն, երգչախմբային արվեստ, թատրոն, նկարչական ցուցահանդեսներ, թանգարանային կյանք. սրանք այն կարևոր բնագավառներն են, որոնցում առկա հաջողություններին հաճախ են անդրադառնում արցախյան պարբերականները:

6. Արցախյան մամուլը առանձնակի ջերմությամբ է արձագանքում Հայաստան-Արցախ մշակութային կապերի խորացմանն ուղղված ձեռնարկումներին: Թերթերում «Հյուրասրահ», «Համակարգ», «Գրադարակ», «Հիշողության դաշտ», «Մշակութային անցուդարձ» և մի շարք այլ խորագրերի տակ տեղադրվում են Հայաստանից ժամանած մշակույթի տարբեր ոլորտների հայտնի դեմքերի մասին հոդվածներ, նրանց հետ կազմակերպված հարցազրույցներ, ինչը ընթերցողի մոտ ստեղծում է երկու հայկական պետությունների՝ մեկ մշակութային դաշտ ունենալու տպավորություն:

7. Մամուլի ազատականացումը նպաստեց նաև տպագիր խոսքի ժանրային նկարագրի ընդլայնմանը: Լուրի, ռեպորտաժի, թղթակցության ժանրով գրված հրապարակումների կողքին արցախյան պարբերականները որոշակի տեղ են հատկացնում նոր ժանրատեսակներին՝ նամակ-գրախոսություն, բանավիճային-մենախոսություն, գրաքննադատական դիմանկար, ինքնադիմանկար և այլն:

8. Տպագիր մամուլը մեծ տեղ է տալիս գրական թեմատիկային: Ըստ որում, դրանք սոսկ գրական կյանքի նորություններ չեն, այլ թեմատիկայի լուսաբանման բազմաժանր հրապարակումներ. գրականագիտական նամակագրություններ, գրական ստեղծագործությունների ուշագրավ վերլուծություններ, գրական հրապարակախոսական նյութեր, չափածո գործեր, որոնցով ընթերցողը ոչ միայն ծանոթանում է լույս տեսած այս կամ այն ստեղծագործությանը, այլև հաղորդակցվում գրականագիտական վերլուծություններին ու մեկնաբանություններին: Մամուլի համար շարունակում է առանցքային մնալ նոր հեղինակների և նոր անունների հայտնաբերումը:

9. Գրական-մշակութային բանավեճերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տպագրական տարածքն արցախցի լրագրողները ոչ միշտ են նպատակային օգտագործում: Եվ չնայած բազմակարծության առկայությանը, արցախյան մամուլում ճշմարտության վերհանումը հաճախ ուղեկցվում է նեղ անհատական մոտեցմամբ, որոնք զերծ չեն վիրավորանքներից, պիտակավորումներից: Այսինքն, բանավիճային ժանրում հաճախ չի պահպանվում լրագրողական էթիկան:

10. Արցախյան մամուլում հետաքրքիր համատեքստում են արտացոլվել ինքնության պահպանմանն ու զարգացմանն առնչվող հարցերը: Ինքնությանն առնչվող հրապարակումները վերաբերում են Արցախի պատմությանը, պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրմանն ու պահպանմանն ուղղված աշխատանքներին, հին ավանդույթների ու արհեստի ձևերի կենդանացմանը, անհետացման եզրին գտնվող ժողովրդական նվագարանների պահպանմանը, ճիշտ երաժշտություն քարոզելուն և այլն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. «Մշակութային տեղեկատվական դաշտը արցախյան գոյապայքարի տարիներին», Լրատու, 2011, 2 (11), էջ 93-97:

2. «Մշակութային բանավեճերն արցախյան պարբերականների համապատկերում», Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2012, 1, էջ 136-140:

3. «Մշակութային հրապարակումներն արցախյան մամուլում (1988-1994 թթ.)», Կրթությունը և գիտությունը Արցախում, 2012, 3-4, էջ 181-189:

4. «Մշակութային ինքնության պահպանման հիմնախնդիրներն արդի արցախյան մամուլում», Լրատու, 2013, 1 (14), էջ 245-251:

5. Проблема сохранения культурной идентичности в контексте современной арцахской прессы, Приднестровский государственный университет им. т.г. Шевченко, ЖУРНАЛИСТИКА XXI ВЕКА: ОПЫТ ПРОШЛОГО И ВЫЗОВЫ БУДУЩЕГО, Сборник научных трудов Международной научно-практической конференции, Тирасполь, 2013, стр. 4-9.

АСКАРЯН ШУШАН РОБЕРТОВНА

КУЛЬТУРНАЯ ЖИЗНЬ В АРЦАХСКОЙ ПРЕССЕ

/1990-2010 г.г./

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.06
“Журналистика”

Защита состоится 15 октября 2014 г., в 14³⁰ на заседании специализированного Совета ВАК 012,
действующего при ЕГУ, по адресу: Ереван, улица Хачатура Абовяна 52/а, ЕГУ, корпус филологического
факультета, аудитория 202.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена вопросам отражения культурной жизни в Арцахской прессе в период с 1990 г. по 2010 год.

Работа состоит из введения, трех глав с соответствующими подглавами, заключений и перечня использованной литературы.

Во введении обоснованы необходимость и актуальность данного научного исследования, а также разъяснены его цель и задачи. Здесь представлены также методическая основа и принципы работы, которые дали возможность для применения к представлению материала систематизированный подход.

В первой главе рассматриваем публикации в Арцахской прессе о культуре в годы освободительной борьбы /1988-1994/. В этой главе, в частности, представлены краткие сведения в газете “Советский Карабах” как о культурной жизни Карабаха, имеющего статус области в составе Советского Азербайджана, так и проводимой азербайджанскими властями культурной политике. Газета “Советский Карабах” и, в общем, деятельность печатной прессы того времени являлись частью навязанной культурной системы, что по существу была превращена в инструмент национального давления и которая была впитана явной и нескрытой дискриминацией. Это была своеобразной агрессией в отношении культурных представлений людей, живущих на данной территории, что в действительности углубляла межэтническое напряжение и привела к тому, что армяне попытались встать на защиту своих культурных достижений.

В течение шестилетней освободительной борьбы, несмотря на создавшуюся тяжелой социально-экономической ситуации, культура также посредством прессы выполняла свою функцию, направленную на сохранение нации. В годы освободительной войны в центре внимания Арцахской периодики находились в особенности театральное, вокальное и изобразительное искусство, а также культурно-исторические памятники. Между тем, отсутствие материалов о других сферах искусства в основном можно объяснить наличием упущений в этой области.

Сегодня во всем мире культура тесно соединена с историко-политическими и образовательными событиями и именно культурным составным обусловлены смысловое поле нации и ценностная система.

Учитывая важность проблемы сохранения культуры, в особенности в контексте территории со спорным статусом - в контексте сохранения идентичности Арцаха, мы рассматривали эту проблему в контексте Арцахской периодической печати с сознанием того, что общественное звучание исследования последнего является первоочередным и это не вызывает сомнений.

Во второй главе / “Культурная политика Арцахской периодики после прекращения огня /1994-2010г.г.”/ изображает картину культурной жизни послевоенного периода со своим продвижением, развитиями и трудностями. Отражение в прессе проблем в сфере культуры НК в результате войны не было отложено, а наоборот, о них было сказано громкогласно, была сделана попытка указывать выход из сложившейся ситуации.

Культурная жизнь в период независимости нашла свое особое место в процессе государственного строительства. Сегодня народ Арцаха также с помощью политики в сфере культуры стремится быть представленным международному сообществу.

Уже после освободительной войны была упорядочена работа выходящих в свет газет и журналов в том числе с точки зрения жанрового многообразия. В этом контексте была сделана попытка представлять жанровую картину публикаций, отражающих культурную жизнь.

В данной части работы мы коснулись отраженных в печати литературных диспутов, которые в той или иной степени связаны с культурной реальностью Арцаха.

Рассматривая национальную идентичность в качестве жизненного составного, **третья глава** названа “Вопросы культурной идентичности в арцахской прессе”. В основе политической истории нагорно-карабахского конфликта лежит проблема сохранения идентичности армянства Арцаха. Как результат постоянно меняющейся социально-культурной среды, а также противоречивых и взаимоисключающих ценностных ориентиров проблема сохранения культурной самобытности и национальной идентичности стоит в более обостренной форме. В настоящее время в условиях культурной глобализации и информационной безопасности в Арцахе, как и ряде постсоветских стран остро стоит вопрос сохранения национальной идентичности.

Затяжные системные изменения до второго десятилетия независимости, социально-экономические и морально-политические преобразования в Арцахе привели к тому, что проблемы культуры и занимающиеся ими различные учреждения оказались в неопределенности, подчиняясь воздействиям инородных, низкопробных культур.

В данной главе попытались обосновывать и представлять ключевую роль культуры, как упорядочающего составного социальных взаимодействий и информационно-культурной политики в формировании идентичности.

В заключениях обобщены основные итоги нашего исследования.

SHUSHAN ROBERT ASKARYAN

CULTURAL LIFE IN ARTSAKH PRESS

(1999-2010)

Philology PhD thesis, specially 10.01.06 “Journalism”

Defence day: 15 October, 2014, 14³⁰ pm at the session of the VAK Specialized Council (Supreme Certifying Commission) 012 under in Yerevan State University.

Address: Republic of Armenia, Yerevan, 52/A, Abovyan st., Yerevan, YSU, Faculty of Philology, room N 202,

SUMMARY

The dissertation is devoted to the cultural life of Artsakh press including the period between 1990-2010.

The research consists of introduction, three chapters with corresponding subchapters, conclusions and bibliography.

In introduction the necessity of scientific research and actuality are substantiated and the aim and tasks of research are clarified. The research presents the methodological basis and principles which gives us the opportunity to represent the material in systematized motivations.

In Chapter 1 we touched upon the cultural publications of Artsakh press in 1988-1994. In this section we mentioned about printing especially in the “Soviet Karabakh” concerning Karabakh’s cultural life which had regional status in the period of being under the rule of Soviet Azerbaijan, the cultural policy carried by Azeri authorities. The “Soviet Karabakh” and generally all the activities of press of that time were the part of imposed cultural system, which, according to its essence, was turned to a tool to apply national pressure and was infiltrated with obvious and ulterior discrimination. This was a typical aggression towards the cultural thinking of the people living in the territory which actually deepened the interethnic tension and led Armenians to try to preserve their cultural achievements.

During the 6 years of fighting despite the hard social-economic and political situation the culture realized its national function through the press. In the above mentioned years especially drama, music and painting were in the centre of Artsakh periodicals’ attention - the absence of some materials concerning another realms of culture is mostly explained by the omissions recorded in the sphere.

Today our culture is intermingled with historical-political, educational and social events throughout the world: the semantic fields and values of any society and nation are conditioned by cultural components.

Signifying the question of preserving culture especially in the territory having disputable status in preserving Artsakh’s identity we regarded it in the context of our press perceiving the fact that the actual sound of investigation of the latter is primary and out of suspicion.

Chapter 2 (“The cultural policy of Artsakh periodicals after cease-fire (1994-2010)”) reflects the picture of afterwar life along with its progress, developments and difficulties. The reflection of problems raised in cultural sphere of NK after war was not delayed, on the contrary, it was raised and attempts were done to go out from the current situation.

The cultural life of the period of independence had its own place in the process of state building. And today Artsakh people want to be presented in international arena with the help of cultural policy.

The work of published newspapers and magazines was also regulated with the variety of genres after the war. In this context we made an attempt to present the genre picture of publications which reflect the cultural life.

In this part of our research we touched upon the literary debates reflected in press concerning cultural reality of Artsakh in this or that way.

Considering the national identity as a vital component of cultural reality **Chapter 3** is entitled as “The questions of cultural identity in Artsakh press”. In the basis of political history of Karabakh conflict lies the question of preserving the

national identity of Artsakh people. The changing social-cultural surrounding, contradictory and mutually exclusive meriting orientations question the cultural originality and national identity more sharply.

Today, in the state of cultural globalization and informational security, like a number of other post soviet countries the question of preserving the national identity is raised sharply in Artsakh,too.

The prolonged systematic changes, social-economic and moral-political interchanges in the second decade of Independence in Artsakh led to cultural problems and the institutions concerning those issues practically appeared in uncertain conditions undergoing strange and low cost cultural influences.

In this chapter we also tried to substantiate and represent the role of culture as a reflection of social interactions and cultural informative policy in the formation of identity .

The main results of our investigation are summarized in the **conclusions**.